ՍԵԴԱ ՏՈՆՈՅԱՆ

ԹՈԹՈՎԵՆՑԻ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Վահան Թոթովենցը պաշտամունքի հասնող սեր էր տածում մեր ժողովրդի երկու մեծագույն զավակների՝ Անդրանիկի և Թումանյանի նկատմամբ՝ նրանց համարելով անհատականացված ազգություն: 1917 թվականին Անդրանիկը նրան հրավիրում է ստանձնելու իր հիմնադրած «Հայաստան» թերթի խմբագրի պաշտոնը: Թոթովենցը մեծ սիրով համաձայնում է, դառնալով ոչ միայն խմբագիր, այլև մեծ Զորավարի թիկնապահն ու թարգմանիչը:

1915-1917 թվականներին, «Հայաստան» թերթը խմբագրելիս, Թոթովենցը զարմանալի ակտիվությամբ էր արձագանքում ազգային, հասարակական ու քաղաքական իրադարձություններին: Նա գրում է զանազան հոդվածներ, նոթեր, պատկերներ, արձակ մանրապատումներ, որոնք շոշափում էին ամենատարբեր հարցեր, իհարկե, սևեռակետ ունենալով հայրենիքի ու ժողովրդի ճակատագիրը: 1915 թվականին, Թոթովենցը, մտնելով ազատագրական պայքարի ասպարեզ՝ արձագանքում է կամավորների հավաքի ու զինվորագրման կոչերին և շուրջ հարյուր յոթանասուն մարդուց բաղկացած խմբով ռուսական «Ցար» նավով ժամանում է Արխանգելսկ, ապա Պետերբուրգի վրայով հասնում Կովկաս, ռազմաճակատ: Նավի վրա են գրվել «Ազատության ճանապարհին» նոթերը, ինչպես հիշատակում է հեղինակը՝ 1915-ի հունիսի 5-ին: Կամավորները «ազատության իդեալը իբրև առագաստ պարզած են հավաքագրվել հայ ժողովրդի պայքարին, համոզված, որ քաղաքակրթության օրրանի ակունքներին կանգնած ազգը չի կարող կորցնել «իր հոգեկան ուժգնությունը»: Նրանք անխորտակելի կամքով են եկել հայրենիք ու «տեսնելով իրենց եղբայրներուն ու քույրերուն մահը», ամբողջ հոգով զգում ու կրում են մեծ վշտի ծանրությունը, սակայն ներքին անմարելի կրակ ունեն սրտերում, «կարծես ամեն ինչ մեռած այս հսկա տիեզերքին մեջ իրենց համար միայն գոյություն ունի հայրենիքը, փոքրիկ և գեղանի հայրենիքը»: Ու ամենևին զարմանալի չէ, որ հայ գրողը, իր աչքի առջև ունենալով ավերակված երկիրը, հոշոտվող ժողովրդին՝ խորհում է ոչ միայն հարազատ հողի ու ազգության ճակատագրի մասին, այլև համայն աշխարհի: «Ամեն ինչ հոգիիս, մտքիս և

բովանդակ էության մեջ կդառնա հայրենիք և հայրենական: Եվ կկրկնեմ. «Պետք է փրկել այս բոլոր փոքր և մեծ հայրենիքները՝ փրկած ըլլալու համար մեծագույն հայրենիքը – աշխարհը: Եվ ինչո՞ւ չէ. փրկանքի ճանապարհին վրա՝ իմ փոքրիկ հայրենիքը առաջին անգամ կհանդիպի. որովհետև այդ հայրենիքի հողի ջերմությունը, կենդանությունը կզգամ իմ ոկորներուս մեջ. անոր լեզուն կթոթովե իմ սիրո բոլոր երգերը, իր կյանը ամենեն ավելի կարող են բացատրել այդ երաժշտական լեզվին մեջ և կհիշեմ Շահ-Մուրադյանի «Կռունկը» և «Հայաստանը», որ կարծես ողջերթ մըն էր»:

Թոթովենցը հայ մարդու, հայ ոգու կենսական երակներով էր խորհում ու դատում, հումանիստական բարձր աշխարհազգացողությամբ էր գնահատում երևույթները: Կամավորների նրա գնահատություններում խոր ջերմություն, սեր ու հավատ կա. նրանց հույսերի ու երազների մասին նուրբ դիտարկումներ, քնքույշ վերաբերմունք: Նավի վրա նրանց պար ու երգերի, կենցաղավարության, ընկերասիրության նկարագրումները, թեպետ ժլատ վրձնահարվածներով՝ տրված են համոզիչ նրբագծերով: Ժողովրդական ու սիրո պարերգերի հետ, գրում է Թոթովենցը, կամավորները հնչեցնում են նաև մարտական-հերոսական երգեր. «Սիրո բոցավառ երգերեն կանցնին կռվի, հեղափոխական երգերու և սրտագին տուներ կնվիրեն Վռամի և Իշխանի թարմ գերեզմաններուն.

Իշխան եկավ՝ ձեռքը մաուզեր,
Ճան լելելե, ճան լո, լո, լո,
Վռամ եկավ՝ ձեռքը գրիչ,
Ճան լելելելե, ճան լոլոլոլո:

Եվ այնչափ կծափահարեն, պարի խումբը այնքան կմեծնա երբեմն, որ նավու ավագ կայմերը մեջ կառնեն և 40-50 հոգի կդառնան, որոնց բացականչություններուն կխառնվին ռուսներ՝ «կեցցե»-ներով»:

Թոթովենցի պատկերները փոխվում են կսկծալի ու դաժան տեսարանների, երբ անցնում է պատերազմի ու թուրք ջարդարարների պատճառած արհավիրքների նկարագրությանը: «Որբերուն», «Հայ հանճարին», «Պատկերներու տարբերություն», «Գեղարվեստը և պատերազմը», «Թափառումներ իմ ցեղի նկարագիրներուն մեջ (թռուցիկ ակնարկ)», «Ի խորոց սրտի խոսք ընդ աստծո» (այս խորագրով՝ երկու գործ, երկրորդը գրված 1921 թվականին), «Խորենին պատմությունը», «Բաց նամակի մը շուրջը», «Ալֆրեդ Տերմեն», «Մեր կորստի էությունը» նոթերում ու ակնարկներում արձակագիրը խոր ցավով ու դառը զգացումներով է ներկայացնում այդ ամենը՝ մեկը մյուսից ողբերգական մանրամասներով: Բոլոր այս գործերն էլ գրված են նույն տարում՝ 1917 թվականին, երբ զորավար Անդրանիկը հիմնադրեց «Հայաստան» թերթը և

խմբագիր կարգեց Վահան Թոթովենցին: Արևմտահայության սպանդը, հայության անանախադեպ կոտորածները ստիպեցին մի շարք մտավորականների գրողների՝ հենվելով իրապատում եղելությունների ու ականատեսների հավաստի փաստերի վրա, ստեղծել ամբողջական մի տարեգրություն՝ «Վշտապատում» ընդհանուր խորագրով: Թոթովենցն այդ ծեռնարկումի հեղինակներից էր և «Խորենին պատմությունը» ակնարկում հայտնում է, թե ինչպես «Երզնկայի դաշտի կոտորածի պատմությունը գրելիս, բոլոր սրտաճմլիկ պատմություններու կողքին՝ դիմագրավեցի այնպիսի երևույթի մը, որ չի կարող հեռանալ իմ աչքիս առջևեն»: Եվ անում է մի իրական պատմություն. Երզնկայի գյուղերից մեկի բնակիչ հայ զինվոր Խորեն Սերոբյանը անձամբ Թոթովենցին տանում և ցույց է տալիս մի խրամատ, «որուն մեջը մարդկային ոսկորներով լեցված էր»: Ու գրողը լսում է նրա որքան ծանր ու անհավատալի, նույնքան ստույգ արկածը. «Վահան, ասկե տարի մը առաջ,– սկսավ հեծեծալով,– թուրքերը ինձ սպանեցին և թաղեցին այստեղ, հողը տվին վրաս և հեռացան, բայց ես մեռած չէի, երեսը ըլլալուս համար մութը կոխելեն հետո ելա և քանի մը վերքերով և արյունաթաթախ բարձրացա այդ դիմացի սարը և ապաստանեցա քուրդերու մեջ և ազատվեցա»: Խորենը արցունքն աչքերին պատմում է, թե ինչպես են 150 մարդու գնդակահարելուց հետո, բոլորին մեկ-մեկ «խշտիկներով անգամ մըն ալ «ստուգում» կատարել՝ թե մեռած են և ոտքերեն բռնած նետած են փոսը և հողով ծածկած»: Ավելին՝ նա Թոթովենցին տանում է քաղաք և մի խանութում ցույց տալիս այն թուրք դերձակին, որը 150 մարդուն «գնդակահարել տվողն ու ստուգում կատարողն էր». նա լկտիորեն ազատ ման էր գալիս Երզնկայի փողոցներում՝ ասելով, թե «վերին հրաման էր և պետք էր հնազանդիլ»: Գրելով, թե այդ թուրքի՝ Առնավուտ Սուլեյմանի հովանավորն էր՝ Երզնկայի «մեծ սրիկաներից մեկը»– պաշտոնյա Խայրին, և թե մեկը, թե մյուսը «էնվերի և Թալեաթի կողքին աչքի չզարնվելիք սրիկաներ են», Թոթովենցը դատապարտում է գերտերությունների այն ստոր քարոզչությունը, ըստ որի, իբր, «կոտորածների պատասխանատուն անձամբ առանձին անհատներ են»: Նա հանգում է ճշմարիտ ընդհանրացման. «Սիավասիկ միջազգային բարոյականի կշիռը»:

Իր մանրապատումներում գրողը փորձում է թափանցել երիտթուրքերի հանցապարտ գործողությունների խորքը, ավելի շուտ վավերական, քան գեղարվեստական փաստերի լեզվով վերակենդանացնում է հայ որբ մանուկների ողբագին դրությունը և ժողովրդի «հավաքական վշտակոծ հոգին ու մորմոքը»– նրանց ճակատագրի հանդեպ («Որբերուն»): Մի առանձին պաթոսով պանծացնում է հայ ժողովրդի արարչագործ ոգին, անգամ չարչարանքների մեջ՝ նրա ոգորումներն ու մարտնչումները: «Զա՛րկ ճակատդ, ով Հայ Հանճար,

դարավոր գիշերի քարերուն... և թող արյանդ ճաճանչը օգնե խավարի նվաճման սրբազան աշխատանքին: Դու պատրաստ ես այդ ահեղ ողջագուրումին, դու խավարին մեջ լուսակարկաչ լեզվի արարիչն ես. դու հավիտենական երգիչն ես ազատության, դու հաստիչն ես այն լուսեղեն եղեալին, որ կռիվ է հայտարարած մութին դեմ: Ո՜վ Հանճար Հայկյան, երբեք մահացյալ, միշտ պատրաստ մարմարյա ճակատով դիմագրավելու մրրիկներ՝ այս գեղեցիկ, բայց ինքն իր գլխացավեն պտուտվող դժբախտ տիեզերքին...» («Հայ հանճարին»): Այպիսի գործերում ասես արձակագիրը բացառիկացնում է սուբյեկտիվ-զգայական շեշտադրումը, առարկայականից անցնում հռետորականին ու վերամբարձ ոճին: Սակայն իրական տեսարաններն ու կատարվող ոճիրներն են ուղղակի թելադրում պատումների նման ոճն ու ռիթմը: Թոթովենցը, ինչպես խոստովանում է մի շարք դեպքերում, անկարող է սառն ու անկիրք նայել փաստերին, անտարբեր դիտող-արձանագրողի դեր ստանձնել: Ստեղծագործական խառնվածքով էլ որոշակի հակում ունենալով դեպի հուզական-քնարական արձակը, մի տեսակ կարծես ակամա դիմում է ոճական այդ սկզբունքին:

«Պատկերներու տարբերություն» նոթագրության մեջ Թոթովենցն ուղղակի հաստատեց, որ «Պատերազմը ոչ թե մեզ ուրիշ փոքր ազգերու պես ցնցեց և քշեց մեր հայրենիքեն ուրիշ հյուրընկալ հայրենիքներ՝ վերստին վերադառնալու և բնականոն կյանքը վերսկսելու հույսով, այլ գրեթե բնաջինջ ըրավ մեզ, որովհետև շրջապատված էինք իսլամ ոչ-քաղաքակիրթ պետությանն ոճրագործ տարրերով»: Նա ցույց տվեց հայ ազգի կեցության սոցիալ-պատմական պայմանների, ազգային ու քաղաքական ճակատագրի խիստ տարբերությունը տարածաշրջանի մյուս ժողովուրդների վիճակից. «Մարդկային բարձր արժեքները արդիականության համապատկերում ծուռ չափանիշներ ունեն, գտնում է Թոթովենցը. «Մենք կանգնած ենք գերեզմանի եզրին, և խավարն է չոքեր մեր ուսերուն վրա, ընենք միայն այն, ինչ հարկավոր է գերեզմանի եզրը կանգնած մարդուն»: Ու խորհուրդ է տալիս՝ չհուսահատվել երբեք, «այդ գերեզմանին վրայեն ցատկելու ամեն հնարավորություն կա՝ եթե մենք քիչ մը իմաստուն ըլլանք և պատմության վրա նայինք մոր մը անկեղծությամբ»:

Իսկապես ճշմարտացի վավերագրեր են Թոթովենցի մանրապատումները, ոչ թե հայեցողական խոհեր կամ սոսկական դիտարկումներ, այլ ակտիվ բողոք, հայրենասիրության ու մարդասիրության ազնիվ դողանջներ: Անդրադառնալով «Այսպես խոսեցավ նպաստընկալը», «Ի խորոց սրտի խոսք ընդ աստծո», «Թափառումներ իմ ցողի նկարագիրներուն մեջ» և այդ ժանրի ուրիշ՝ գործերին, տպագրված Թիֆլիսի «Հայաստան» թերթում 1917-ին, Ս. Արզումա-

նյանը գրում է, «Գաղափարապես դրանք հնչում էին «որպես պատմական իրադարձությունների կենդանի արձագանք, որպես կենսական վավերագրեր» ու յուրովի փորձեր էին «գեղարվեստական թեմաներ փնտրելու իրական անցքերի խայտաբղետ հյուսվածքում»(1): Շարունակության մեջ գիտնականը ավելացնում է, որ Թոթովենցը բախտորոշ մի ժամանակահատվածում ձգտում էր «պատասխան տալ հայ ժողովրդի համար այնքան կարևոր ու հրատապ հարցի՝ նրա գոյության, ճակատագրի օրհասական հարցին... հայ ժողովրդի դարավոր մաքառման, հերոսական մարտնչումների և ստեղծագործ ոգու մասին պատմական էքսկուրսներ կատարելով, նա հուզիչ պատկերներով իր զայրույթն է արտահայտում համաշխարհային սպանդի դեմ, «Մայրենի եղեռնի» հանցագործ ակտի դեմ: Հումանիստական առողջ աշխարհայացությամբ Թոթովենցը քննում է երևույթները և հանգում այնպիսի եզրակացությունների, որոնք դեմոկրատական շերտերի հոգու ցոլացումներն էին, նրանց տրամադրությունների անմիջական անդրադարձումը»(2):

«Թափառումներ իմ ցեղի նկարագիրներուն մեջ» խոր ու ինքնատիպ աշխատանքում Թոթովենցը մի ամբողջ գաղափարաբանական տեսություն է զարգացնում՝ հայ ժողովրդի ազգային բնավորության, նրա առանձնահատկությունների, որակների ու գլխավոր գծերի վերաբերյալ: Նա իր ազգային գաղափարախոսության համակարգում ներառում է պատմական, աշխարագրական, սոցիալ-տնտեսական, ներազգային ու քաղաքական այն գործոնները, որոնք դարերի հոլովույթում կազմավորել են նրա բնավորությունը, կոփել կամքը, դիմադրական ոգին, նպաստել նրա ինքնատիպ էության ձևավորմանն ու զարգացմանը: «Հայ ժողովուրդն ունի դարերու Աւանք՝ ահա իր ամենախոշոր և բարձրագույն և խորագույն արժեքը, որովհետև այդ դարաւոր կյանքի արդյունքն է իր անվեհեր, տառապող և դիմացող, մաշվող և միշտ ստեղծագործող բնազդին, հանճարին, հավաքական սրբազան և գիտակից իդեալին...»(3):

«Ազգային գաղափարաբանությունը,– սահմանել է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը,– տվյալ ազգի պատմության փիլիսոփայությունն է, ազգի մտավոր գործունեության ամբողջ փորձի տեսական համադրությունը՝ գիտական, գեղարվեստական, բանահյուսական, կրոնական և այլն»(4): Այս պատմական գործոններով է ազգը պահպանում իր ինքնությունը: 1910-ական թվականներին, հայ ժողովրդի համար օրհասական մի հանգրվանում, ազգի ինքնության, նրա գոյատևումի խնդիրը եղել է մեր բոլոր գրողների՝ բանաստեղծների ու արձակագիրների, դրամատուրգների ու հրապարակախոսների գեղարվեստական պատմահայեցության սևեռակետը: Թումանյանի «Հայրենիքի հետ», «Հոգեհանգիստ» բանաստեղծությունները, բազմաթիվ հոդ-

վածներ ու ելույթներ, Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը, «Դանթեական առասպել», «Կապուտաչյա հայրենիք», «Ազգային երազ» պոեմները, Վարուժանի, Սիամանթոյի, պոեզիան, Դեմիրճյանի ու Վրթանես Փափազյանի մի շարք դրամատուրգիական երկեր և այլն, արտահայտում են այդ ճակատագրական տարիների ազգային հոգեբանությունն ու ազգային պատմության փիլիսոփայությունը:

Վահան Թոթովենցը, որն անմիջականորեն գտնվում էր պատմական իրադարձությունների և ռազմական գործողությունների հանգուցակետերում, իր գեղարվեստական ու հրապարակախոսական ստեղծագործություններով՝ մանրապատումներով, պատմվածքներով ու ակնարկներով, տասնյակ հոդվածներով, «Զորավար Անդրանիկ և իր պատերազմները» (Լևոն Թութունճյանի հեղինակցությամբ) փաստավավերագրական երկով, «Դոկտոր Բուրբոնյան» սատիրավեպով և այլն, այնքան կոնկրետ ու հավաստի, այնքան հետևողականորեն ցոլացնում էր հայ ազգային կյանքը և ժամանակը՝ իրենց ողբերգական անցքերով:

«Դարերը չեն կրնար իրենց ուսերուն վրա երկար ատեն դիակներու կույտ տանիլ, պատմությունը, ժամանակը կը մաքրե իր էջերուն վրայեն բոլոր վերքերը: Ապրած են միայն այն ազգերը, որոնք դարերու ուսերուն վրա ծանրություններ եղած չեն, այլ եղած են միշտ պայծառ, միշտ մշտանորոգ, այնպես, ինչպես ինքը ժամանակն է, այնպես, ինչպես ամեն առավոտյան բացվող արևին շողերը»(5.364):

Զարմանալի խոր ու արդիական իմացություն է ցուցաբերում Թոթովենցը ազգային-հավաքական կյանքի հարատևության, նրա մաքառումների, պատմական փորձի, այդ գործում գրականության, արվեստի, ճարտարապետության, պետական-կառավարական կառույցների աշխատանքների կազմակերպման հարցերում: Նա հանձին հայ ժողովրդի տեսնում է «իբրև մեկը երկրագնդի այն ազգերեն», որոնք ծախորդությունից, անկումներից ու բյուրավոր կորուստներից հետո, պահպանել են ազատության ոգին, անկախության տենչը, միաձուլել դրանց դարավոր մարտնչումները՝ հանուն ազգային ամբողջականության իդեալի: Իսկ եթե մեկ ազգություն, դարերի ընթացքում, ամուր է բռնում այդ իդեալի դրոշը, երբեք չմտածելով ցած դնել, որքան էլ խռշոր ու գիշատիչ պետությունները կրոնական, ցեղային, մշակութային ու այլազան հակամարտություններ ունենան՝ ջանալով բնաջնջել այդ ազգությունը, միևնույն է՝ չեն կարող: «Ընդդեմ այդ գազանային ճիգերուն՝ ազգը կպահպանի ամբողջական իդեալը: Դա ինձ կուտա խոր ներշնչումներ:

Հայ ժողովրդի ամբողջական իդեալը՝ մնալու ազգ իր բոլոր առանձնահատկություններով, եղած է ամենեն լուսավոր գիծը, որ երկարած է իր զավակներուն հոգիներուն մեջ մեկ ծայրեն մյուսը, երկրին մեջ, թե ի տարագրություն, երբեմն բեկբեկած առժամանակյա կերպով խավարին և սուրին դեմ, բայց երբեք ջնջված անդառնալիորեն»(5.365-366): Սա այն ճշմարիտ ընդհանրացումն է, որ Թոթովենցը քաղում է պատմության դասերից՝ հայ ժողովրդի դիմացկունության վերաբերյալ: Այդքան փոքր, իսլամական տերությունների մշտական հարվածներին ենթակա, բայց արյան անիմանալի, թաքուն ու անսպառ պաշարներով կարողանում է ոչ միայն դիմանալ, այլև ստեղծագործել, համաշխարհային քաղաքակրթությանը իր հոգևոր-մշակութային նպաստը բերել: Եվ գրողը հետևցնում է, որ մեր ազգային էական առանձնահատկություններից մեկը հենց ստեղծագործ ոգին է, որն անցամաք է պահում նրա արաչագործ բազկերակը:

Ամենևին էլ պարադոքսալ չէ Թոթովենցի այն հարցադրումը, թե «ինչո՞ւ հայ անհատի հանճարը օտար հորիզոններու տակ ունեցած է զարմանահրաշ փթթումներ, վարդի թուփի պես ծաղկած, փարթամ և հոտավետ, և այդ միևնույն հանճարը միևնույն շքեղությունը ունեցած չէ իր հայրենական, իր ցեղային միջավայրին մեջ, երբ միևնույն ժամանակ մենք կը տեսնենք, որ հայ ժողովուրդը պաշտամունքի անօրինակ պոռթկումներ ցուցուցած է իր ծոցին մեջ բարձրացող հերոսներուն հանդեպ»(5.367): Այս հարցադրման պատասխանը հեղինակը պայմանավորում է մի շարք հանգամանքներով, բայց առաջին հերթին հայրենի մտավորականության «բացասական գծերով»: Տաղանդները խոցված միջակություններից՝ թողնում հեռանում են և օտարության մեջ ծառայում ոչ միայն իրենց ժողովրդին, այլև ընդհանուր մարդկությանը, շատ շուտով արժանանում մեծ ճանաչման: Այսպես թե այնպես, ըստ Թոթովենցի, հայ ժողովրդի արգանդը իսկական տաղանդներ ու հանճարներ շատ է ծնում, և թող նրանք զուր տեղը չմտածեն, թե «իրենց հանճարի թռիչքներու համար նեղ են հայ ժողովրդի ազգային-հասարակական սահմանները»(5.368):

Վահան Թոթովենցի հայրենասիրական պայծառ նկարագրի դիտանկյունից չափազանց շահեկան փաստաթուղթ է «Բաց նամակի մը շուրջը» ազդու և իմաստուն պատասխանը: Գառնիկ Քալաշյանը «Հորիզոնի» էջերում (1917, N132) տպագրել է իր «Բաց նամակը»– հասցեագրված մուսուլման «ընկերներին», որոնք իբր, պետք է կոչ հնչեցնեն մահմեդական դեմոկրատներին՝ բողոքելու թուրքահայության կոտորածների դեմ: Թոթովենցի պատասխանը լույս տեսավ «Հայաստան» օրաթերթում (1917, N 57):

Եղեռնի գլխավոր գործողությունները տեղի ունեցան 1915-ին, իսկ «Բաց նամակի հեղինակը գրում է, թե շատ տեղին կլիներ, եթե թուրքերը այդպիսի բողոք գրեին: Թոթովենցը իսկույն հայտնում է, որ անկախ նամակի աղերսագին տոնից, հավատում է, որ այն գրված է հայրենասերական նկատառումներով: Բայց ինքը՝ իբրև զավակներից մեկը արևմտահայության, որ ուղղակի կանգնած է գերեզմանի առջև, գտնում է, որ թուրք դեմոկրատները պետք է դա անեին առանց մեր բաց նամակի, ինքնուրույն, այն էլ երեք տարի առաջ: Իսկ այդքան ուշացումով բողոքի ձայն բարձրացնել՝ նշանակում է արժեզուրկ բան անել և ծաղրել դեմոկրատիան:

Նամակում հայտնվում է, որ եթե բարձրացված բողոքը դրական արդյունք չունենա, գոնե սփոփանքի աղբյուր կլինի մեզ համար: Թոթովենցը զայրագին տոնով պատասխանում է. «Այդ բարձրացվելիք բողոքը, ոչ, պարոն սփոփանքի աղբյուր երբեք չի կրնար ըլլալ, երբեք:

Նամակի այդ ոգին կրնա գործածվիլ կովկասյան այլազան տարրերու մեջ համերաշխություն տարածելու, բայց թուրքահայ կոտորված ժողովուրդը թող միջոց չդառնա այդ նպատակին:

Շատ հեշտությամբ կարելի է թողալ կոտորված ժողովրդի հարցը իր վեհության մեջ՝ առանց ավրելու զայն աղերսագին նամակներով առ մուսուլման դեմոկրասին:

Թուրք ընկերներու բողոքը... երեք տարված քար լռութենեն հետո, հանկարծ, «սփոփանքի աղբյո՞ւր»:

Սփոփանքը ուրիշ տեղ պետք է փնտրել»(5.375)

Բացիկում ասված էր նաև, թե պետք է մուսուլման դեմոկրատներին հասկացնել, որ պատմականորեն թուրքը և հայը կապված են իրար և այդ երկրում պետք է ապրեն մասին: Թոթովենցը հեգնախառ գրում է, թե ինչպես կարող են հայերը ապրել օսմանյան թուրքերի հետ, երբ Արևմտահայաստանում այլևս հայ չեն թողել, ոչնչացրել են բոլորին: Իսկ «Թուրքահայաստանը» դարձել է լոկ տերմին, մի հասկացություն, «որ այլևս պատմություն կվերաբերի... Թուրքահայաստանը իր շարունակելի պատմությունը կունենա, բայց ոչ առաջվա անունով»(5.375):

Ամենևին էլ ցեղային ատելություն չէ, որ արտահայտված է Թոթովենցի պատասխանում: Նա պարզապես ռեալ կողմնորոշում ուներ երևույթների հանդեպ, օդային ամրոցներ չէր կառուցում և ոչ մի պատրանք չէր տածում, թե մահմեդական «դեմոկրատները» կարող են բողոքի ձայն բարձրացնել յուրայինների դեմ, կամ, որ ավելի ծիծաղելի էր, ի՞նչ օգուտ կարող էր բերել ցեղասպանությունը կատարվելուց երեք տարի անց նման բողոքը:

Որ. հիրավի, Թոթովենցը ցեղային ատելությունից ու տարբերակումից հեռու մարդ էր հաստատում է հենց 1917-ին գրած մեկ ուրիշ փաստաթուղթ՝ Վանի նահանգապետ Ֆրանսիայի գնդապետ Ալֆրեդ Տերմենի մասին: Գրողը նրա հանկարծակի մահվան առիթով է գրել և չափազանց բարձր գնահատանքով ու խոր ափսոսանքով ներկայացրել ոչ միայն նրա հայանպաստ գործունեությունը՝ հայ որբերի խնամքը, Վանի որբանոցի բացումը, հայ դատարանի ու միլիցիայի ստեղծումը, բարեգործական նվիրատվությունները, Վանա լճում ձկնաբուծություն զարգացնելու ծրագիրը և այլն, այլև նրա մարդասիրությունն ընդհանրապես, լայնսիրտ բնավորությունը: Այդպիսի մարդիկ, նկատում է Թոթովենցը, դժբախտաբար, շատ քիչ են երկրի վրա, և նրա մահով «մեր բարեկամներեն մեկն ալ» պակասեց:

«Մեր կորուստի էությունը» քննական մանրապատումի մեջ Թոթովենցը, հենվելով իթթիհատի պարագլուխների հայտարարությունների վրա և դրանց վերլուծությամբ՝ ցույց է տալիս, թե ինչո՞ւ կազմակերպվեց հայոց մեծ ցեղասպանությունը: Նրանք լկտիաբար չեն քաշվում խոստովանելու, գրում է Թոթովենցը, որ ոչ Վանի հայտնի ապստամբությունը, ոչ կամավորական շարժումը, ոչ որևէ անջատողական փորձեր ու ձգտումներ առիթ կամ պատճառ չեն դարձել աննախադեպ կոտորածների համար: Ամենազորավոր պատճառը նա համարում է այն, որ իթթիհատը հասկանում էր հայ ժողովրդի «վտանգը» կրթության, տնտեսության, մշակույթի, վաճառականության և այլ ոլորտներում: Հայերը գերիշխանություն էին ստանում լույսի, քաղաքակրթության մեջ: «Թուրքերը սիրած են տիղմը և պիտի խեղդվին այդ տիղմի մեջ...»(5.375): Նրանք բացահայտ խոստովանում էին, որ մի քանի տարի հետո մրցության մեջ հայերը խեղդելու էին իրենց և այլ միջոց չունեին հայերի քաղաքակրթական ու տնտեսական առաջխաղացումը կանխելու համար: Դա թուրքերի սիրած մեթոդն էր, նրանք կարող էին հաջողության հասնել միայն իրենց դիվային ծրագրի մեջ: «Գեղեցիկին սերը պատճառ եղած է, որ մեր «ճակատները աստղերուն հպին», և թուրքը իր տիղմին հավիտենական պահակը և բնակիչը, առիթը գտած է կոտորելու այն ոսկեղեն սանդուխը, որ մեզ աստղերն է բարձրացուցած»– գրում է Թոթովենցը (5.388):

Մանրապատումների ժանրը գրողի նախասիրությունների շրջանակներում շարունակում է մնալ մինչև 1922 թվականը:

Ըստ էության՝ Թոթովենցի պատկերների ու մանրապատումների շարքերում մի քանի ստեղծագործություններ մերձենում են պատմվածքի ժանրին, ինչպես ասենք՝ «Խորենին պատմությունը», «Թերթ մը հուշատետրես», «Նախկին ազնվականը», «Անգլիա, Պարսկաստան և ես» ստեղծագործությունները,

որոնց մեջ պատմողական-էպիկական տարրը միանգամայն ընդգծված է հանդես գալիս, կան տեսանելի հերոսներ՝ իրենց գործողություններով, միջավայրով ու մարդկային հարաբերություններով: Առհասարակ գրողի մանրապատումները նախապատրաստել են նրա պատմվածքների հայտնությունը, իսկ մի քանի պատմվածքներ ուղղակի ստեղծվել են մանրապատումներին զուգահեռ: Սա վերաբերում է վաղ շրջանի գրեթե բոլոր պատմվածքներին՝ «Ներման աղոթքը», «Իմ հորաքույրը» և 1921 թվականին Բոստոնում լույս տեսած «Պատմվածքներ» առաջին ժողովածուի 8 գործերին:

«Ներման աղոթքը» մանկության տարիների մի անմեղ դրվագ է, քաղցր վերհուշ՝ ինքնակենսագրական պատումի մի բեկոր, որի հայելում հեղինակը փորձել է ցուցացնել երեք դիմանկար՝ «քրիստոնյա և աստվածավախ» մոր, իր և իրենց դրացի, փոքրիկ Զարուի դիմանկարները:

Հայտնի է, թե Թոթովենցը ինչպիսի ջերմությամբ, խանդաղատագին ու պաշտամունքի հասնող սիրով է պատկերել մորը՝ աշխարհում Քրիստոսից հետո երկրորդ Քրիստոսին՝ ինչպես բնութագրել է նրան գրողը «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» վեպում:

Անոր պակսած, Տեր, Արքան է ցեղին»:

Ազգի տառապանքը, վիշտն ու լացը տեսած մարդու աղերսն ու բողոքն է միահյուսված այս մանրապատումի մեջ, որ գրվել է 1921-ին և խորագրված է՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո»: Նույն խորագրով, բայց 1917 թվականին ստեղծած մանրապատումի շարունակությունն է ասես՝ նարեկացիական շնչով ջերմացած, ուր Թոթովենցը, իբրև սիրո ու երջանկության ըղձավոր, իր ժողովրդի տանջանքներն ու տենչանքներն է բացում Աստծո առաջ. «Տեր, ես քու արարածն եմ և եկած եմ շնորհներու շնորհը հայցելու քու անհուն արաչութենեդ:

Ես քու արարածն եմ, և դու զիս իմաստուն ես ստեղծած...

... Արարիչ, ես եկած եմ իմաստոթենե ավելի երջանկություն հայցելու քու լույսերեդ, ջերմութենեդ, գարուններեդ և երկինքներեդ: Երջանկության բաղձանքն է, որ զիս մատնած է չարչարանքի և գերագույն մարտնչումներու:

Ես այնքան մը գիտեմ, որ երջանկությունը կա և կբխի արարչագործության ընդ բոլոր ծագերեն և կթվի շոշափելի ըլլալ, ու կխարխափիմ անհայտության և իմաստության մեջ»:

Գրողն իր մանրապատումներում ու ելույթներում առավել չափով ժամանակի ահեղ դեպքերի «վերաքննիչ» է դիտում իրեն և ծանրածանր օրերի տարեգիր է դառնում: Սակայն ինչպիսի՜ հույսերով ու հավատով է վառում ընթերցողին ու ունկնդրին, ապրելու, մարտնչելու և ստեղծելու ի՜նչ խարույկներ

է բորբոքում նրանց սրտերում: Թոթովենցի մանրապատումների մի կենսական առանձնահատկությունը հենց այդ անմարելի հավատքն է, հայոց պատմության ու ճակատագրի սևասև թունելի վերջում լույսի շողեր տեսնելը: Մյուս առանձնահատկությունը՝ ժամանակի ոգին ու բովանդակությունը ճշմարտացի արտահայտելու կարողությունն է, որով բոլոր գործերը, առանց բացառության, ստանում են արդիական կշիռ ու արժեք: Եվ, վերջապես, Թոթովենցը մանրապատումներում անառարկելիորեն պարզում է իր գեղարվեստական խառնվածքի մի էական գիծը՝ հուզական պատկերավոր խոսքի վարպետությունը: Փայլուն համեմատություններն ու էպիտետները, կառույցների սեղմությունն ու ներքին դրամատիզմը, մտքի ընդհանրացումների ուժը նրա մանրապատումներին տալիս են յուրովի խորք ու դինամիկա:

Սրանք հեղինակի անհատականության այն գծերն են, որոնք ավելի ընդգրկուն ու մասշտաբային ծավալումներով արտահայտվեցին նրա պատմվածքներում՝ հավելելով դրանց նաև հոգեբանական ինքնատիպ լուծումներն ու կոլորիտային գեղեցիկ պատկերները և, ամենից գլխավոր արժանիքը՝ մնայուն կերպարների հարուստ աշխարհը:

---

[1] Սևակ Արզումանյան, «Վահան Թոթովենց», Ե., 1961, էջ 53:
[2] Նույն տեղում, էջ 53-54:
[3] Ընդգծումները Թոթովենցին են:
[4] Սերգեյ Սարինյան, «Հայ գաղափարաբանություն», Ե., 1998թ, էջ 4:
[5] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., հ. 3, 1990, էջ 364: